ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն գուրս եկան մամուլի տակից և Ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մոտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻՇԷՐ-ԱՍՈՒՈՒ. ԹՈՎՄԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, երեխաների համար Պալմեր, թարգ. օր. Ս. Տէր-Մարկոսանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵԽ ԵՒ ՆՈՐԱՆ ՋՆՋԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Ծառաքաղաքացիք կարող են գիտել հետևեալ հասցէով Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

ԹԻՖԼԻՍԻ առևտրական վարչութիւնը յայտնում է Թիֆլիսի պ. պ. առևտրականներին, որ 1) ապրիլի 4-ին նշանակված առևտրական վարչութեան պաշտօնական անձանց ընտրութիւնները չը կայացան, որովհետև բաւականաչափ առևտրականներ ներկայ չէին և 2) որ նոյն պաշտօնական անձանց ընտրութիւնները նորից նշանակված են մայիսի 18-ին, առաւօտեան 11 ժամին:

3—3

ОСОБА, знающая РУССКІЙ, ФРАНЦУЗСКІЙ, НѢМЕЦКІЙ языки и начало МУЗЫКИ желаетъ получать мѣсто ГУВЕРНАНТКИ. Объ адресѣ узнать на ПОЧТОВОЙ СТАНЦІЙ въ ДАМСКОЙ комнатѣ.

Մի ՏԻԿԻՆ, որ գիտէ առաւերէն, ֆրանսերէն, գերմաներէն Լեզուները և երգեցողութիւնն սիրգրները, ցանկանում է ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ տեղ ստանալ: Հասցէն իմանալ ՓՕՍՏԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ, ԿԱՆԱՆՑ սենեակում:

3—3

ԳԷՈՐԳ ՎԱՐԱԴԱՆԱՆ ՀԱԽՈՒԱՌԲԵԱՆՑՆ, եղիսաբէթ Ցարութիւնեան Սարգսեանցի և Գրիգոր և Արտեմիզ Սարգսեանցներին ցաւոք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ առաջինի հարս, երկրորդի որդի և փոքրիների քոյր ՆԱՏԱԼԻԱ ԳԻՎԻԼԵԱՆ ՀԱԽՈՒԱՌԲԵԱՆՑՆ ՎԱԽՃԱՆԵԼԵԱԼ. Յուղարկաւորութիւնը հանգուցեալի կը լինի ՇԱԲԱԹ օրը, ամսոյս 17-ին ժամը 9½-ին առաւօտեան իր ՍԵԽԱԿԱՆ ՏԱՆԵՑ ՍԱՂԻ ՎԷՐԸ, որտեղ միջօրէի սուրն է 4 ժամին, ԵՊԻՍԿՈՊՈՍ եկեղեցին, ՀԱՒԼԱԲԱՐ:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԵՐԻՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱԻՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց հիւանդ. Գօրալովիչ ներքին հ., Լոմանենց կանանց և երեխաների հ., Քիւչարևանց խրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևվիչ խրուրգական հ., Վազօրով վիներական և բոգազի հ., Բէյլս աչքի հ., Բաղատուրով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցվև Վերմիշևով ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցվև Բուգկովսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւններին:

Հինգշաբթի. Վազօրով վիներական և բոգազի հ., Լոսինենանց կանանց և երեխաների հ., Լիսիցվև Վերմիշևով ներքին հ., Քիւչարևանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրոնսկի կանանց հ., Մինկևվիչ խրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցվև ներքին հ., Բաղատուրով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցվև Վերմիշևով ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վազօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ադքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաևվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առամնարոյժ Օբրեխտ ադքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Վասիլև:

«ԵՂՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ.»

Առևտրական տունը սրանով յայտնում է, որ դնում մեներին մինչև նոր փոփոխութիւնը վերնում է:

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիներին	4½%
մինչև պահանջելը	4½%
2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամսով	6%
9 ամսով	6½%
1 տարով	7½%
1½ տարով	8%
2 տարով և աւելի	8½%
3) Մանաւոր դնուածներին առաջին կարգի պայ ունեցողներին	9%
Գումարներ տալու ժամանակ վերցնում է մի ամսվայ ընթացքում	10%
« շարաթվայ	9%

ԱՌԵՏՐԱԿԱՆ տան ԳՐԱՍԵՆԵԱԿ գտնվում է իշ. ԹՈՒՄԱՆՈՎՆԵՐԻ տանը, Ալիքսանդրեան այգու դիմացը և բաց է մուտքեր ընդունելու և վերցրած պարարքերի հանգցնելու համար ՀԱՍԱՐԱԿ օրերը առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՕՆԵՐԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

2—3 (2)

ԵՂՕՐ ԿԱՍՈՒՄՈՎԻ ԵՒ ԸՆԿ.

ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակի ընթացքում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կառաջարի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ալիքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

10—10

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ

ԲԷՀՐՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաններ է Ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաքաքային փոստայով, յայտնել իրան թէ ինչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները չեն հասնում և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

Յովհաննէս Մ. ԲէՀրուդեան

Թիֆլիսի հայոց Ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետևեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիրու Թանդոյեան օրիորդական ուսումնարանում:
« 17 — Կուկիրու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Գէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հաւլաբարի Ս. Մինաս եկեղ. Եղմիրեան ուսումն.
« 23 — Զուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զորաբաշի և Նամբուսեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հաւլաբարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱԿԻՑԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ԹԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեղ. Գօգոլի, թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

II

ՀԱՄԱՐԵԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՈՎ,

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՈՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ Ց. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ:

III

ԶԱՒԵՇՏ

1) Պատկերներ ժողովրդական կեանքից, Բ-ԻԻՆԿ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ կը պատմէ պ. Ց. Տէր-Գրիգորեան

2) Տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերգէ բօսանոներ, ի միջի այլոց «ԴԻՆԵՐԸ ԳՐԵՆԱԴԱՑՈՒՄ» երաժշտութիւն Շիֆֆի:

Տեղերի գինը ՍՈՎՈՐԱԿԱՆ է:

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ օրը և թէ ՎԵՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՑՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը:

5—5

ՆՈՒՈ-ԷՕՌՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական բլայով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլ՝ երբ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համբերելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նոու Լյոռքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս եւ՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով Ամամանկի փողոցն Զուպարովին տունն, Երևանի հրապարակի մոտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիտել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս ընկել նորբաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինգերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանատրներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կ՝ տարակուսացուցնեն սեպհական մերոնց լաւութեան անունն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիտել մեզ նամակով՝ թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուզելու համար, որ կը խրկենք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցուցնելու համար, որոնց կը պատասխանենք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Գ. Նեյդլինգերъ. Тифлисъ.

Դ. Ղայոլիսկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Լյուբոպայի:

Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)

Дозволено Цензурою 16 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона